ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<-11-- >> ------------08-----------------2025թ.   N ՄՊ/ 781 -Ա

ք. Արմավիր

«ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Աննա Գրիգորյանի 2025 թվականի օգոստոսի 7-ի դիմումը.

ո ր ո շ ու մ   ե մ՝

1. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող Աննա Գրիգորյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի օգոստոսի 11-ից 20-ը ներառյալ՝ 8 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աննա Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Անահիտ Հարությունյանին:
3. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Անահիտ Հարությունյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի օգոստոսի 11-ից 20-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Աննա Գրիգորյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 21-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

X

Подписано: NIKOGHOSYAN BARSEGH 2808860099   **Բ□ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**